04 AUG 2010

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ

ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐԻ

Մ Ա Ս Ի Ն

631.5
Գ-35

1938

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՑԱՆՔԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

621.2
14 MAR 2013
16738

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱԳՐՈ-ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՑԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Միության Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի 1933 թվի հունվարի 23-ի վորոշումը Հյուսիսային Կովկասում գարնանացանի կամպանիայի գլխավոր ինդիրն է համարում,—

Մոլախոտերի վոչնչացումը,—

Սերմացուի լրիվ հավաքումը,—

Ցանքի ամենաշնչին ուշացում թույլ չտալը և—

Ցանքի պլանի լրիվ կատարումը։

Այս վորոշումը սոցիալիստական դաշտերի բարձր բերքի համար պայքարելու հիմքն է, ընկեր Ստալինի՝ «յուրաքանչյուր կոլտնտեսականի հասցնել մինչև ուռնելորի մակարդակին» լոզունգի իրականացման հիմքը։

Այդ կարելի յե հաջողեցնել միայն վճռական պայքար մղելով սաբոտաժի դեմ, վորը կազմակերպել է կուլակությունը և վորն առանձնապես արտահայտվել է հետևյալով.—

Հողի վատ մշակություն, ցանքի վատ վորակ։

Ցանքի ժամկետների ուշացում։

Գյուղատնտեսական կուլտուրաների անբավարար խնամք (վատ քաղհան, կամ սրա կատարյալ բացակայություն)։

32599-61

Այս բոլորի հետևանքով դաշտերը չափից դուրս աղտեղվել են մոլախոտերով և խիստ իջել է անցյալ տարվա բերքը։

Ագրոտեխնիկայի չկատարումը համարելով բացահայտ ոգնություն կուլակային—ֆաշիստական սաբոտաժին, վորն ելյատես հանդիսանում է սոցիալիստական սեփականության դեմ,—

Հյուսիսային Կովկասի Յերկրային ցանքային Կոմիտեն պարտավորեցնում է յերկրամասի բոլոր մարզգործկոմներին, խորհնտեսություններին, մեքենատրակտորային կայաններին և կոլտնտեսություններին—

Կանոնավոր ցանքաշրջանառություն մտցնելու և բրիգադների հաղամասեր նշանակելու հետ միասին՝ 1933 թվի գարնանացանի կամպանիայի ժամանակ կիրառել հետևյալ հիմնական ագրոտեխնիկական միջոցառումները՝—

1) Ամբողջ սերմացուն մանրակրկիտ կերպով մաքրել քամիչների, տեսակավորիչների և գալարքների (զմեյկա) վրա, այնուհետև մաքրել տրիյերներով, սերմացուն հասցնելով 1933 թվի գարնան համար վորոշված գման աստիճանին։

2) Ամբողջ ցորենը, գարին, վարսակը և արևածաղիկը անպայման 100 տոկոսով ախտահանել, ցորենն, ինչպես կանոն, չոր ախտահանման յենթարկել։ Նրա ախտահանումն ավարտել հարավային ռայոններում մարտի 10-ին, իսկ հյուսիսային ռայոններում —15-ին. գարին ու վարսակը, ինչպես նաև ցանվելիք արևածաղիկը—ֆորմալինի լուծույթով, այդ կուլտուրաները ցանելուց անմիջապես առաջ։

Յեթե տնտեսություններում և ախտահանիչ կայաններում գարին, վարսակն ու արևածաղիկն ախտահանելուց հետո ֆորմալինի մնացորդ լինի, ցանքից անմիջապես առաջ ախտահանել ամենամեծ չափով վարակված վարսակն ու յեգիպտացորենը, այդ

նպատակով ամբողջովին օգտագործելով ունեցած ֆորմալինը։

3) Աշնանավարն օգտագործել առաջին հերթին հասկավոր կուլտուրաների, մանավանդ ամուր ցորենի համար, մասնագիտացված կոլտնտեսություններում—շաքարի ճակնդեղի, ծխախոտի և բամբակի համար։

4) Դաշտ դուրս գալու առաջին հնարավորության դեպքում ամբողջ աշնանավարը, բացի ամենավաղ ցանքի համար օգտագործվողից, տափանել 1—2 որվա ընթացքում, ապա անհապաղ ցանել շարքացանով,—հասկավոր և վաղ ցանվող տեխնիկական կուլտուրաներ։

5) Աշնանավարը տափանել ծանր տափաններով, 2—3 անգամ, նայած հողի խառության և մշակման աստիճանին։ Մոլախոտերով աղտեղված հողամասերում տափաններով հավաքված մոլախոտերի ճնացորդները դաշտից դուրս տանել կամ այրել։ Սոպան հողերի վրա կատարված աշնանավարը դիսկավոր տափաններով կուլտիվացիայի յենթարկել։

6) Յեթե աշնանավարը սաստիկ պնդացել է կամ նրա վորակը վատ է (մեծ չափով անվար թողնված տեղեր), հասկավոր կուլտուրաների ցանքը կատարել ցանի արորներով և ցորենի գութաններով, այնուհետև իսկույն մեկ անգամ տափանել թեթև տափանով։

7) Ուշ ցանվող տեխնիկական կուլտուրաների հատկացված աշնանավարը ցանելուց առաջ անմիջապես մշակել,—յեթե շատ մոլախոտեր կան—բազմախոփ և թուր չունեցող ու ցորենի գութաններով։ Այնուհետև իսկույն և յեթ տափանել, յեթե հողը շատ պինդ չե և մոլախոտերը քիչ են,—թաթավոր կուլտիվատորներով և տափաններով։

8) Այն բոլոր հողերի վրա, վորոնք աշնանը չեն վարված և աղտեղված են արմտիքներով և արմատածիլ մոլախոտերով (հասարակ սեղ, տատասկ, խոզավորուկ, վոզնեխոտ, ջրախոտ և այլն), գարնանավարը կատարել միայն խոփավոր տրակտորային գութաններով և մեկ—յերկու խոփանի ձիու գութաններով, անհապաղ տափանել և այնուհետև ցանել շարքացանիչներով։

9) Տրակտորային խոփավոր և մեկ-յերկու խոփանի ձիու գութաններով վարը կատարել չորային և վոչ բավականաչափ խոնավ ռայոններում, վոչ պակաս, քան 10—13 սանտիմետր խորությամբ, իսկ բավականաչափ խոնավ ռայոններում—վոչ պակաս, քան 12—16 սանտիմետր խորությամբ, նայած թե դաշտերն ինչպես և ինչ աստիճանի յեն աղտեղված բազմամյա մոլախոտերով, մանավանդ տատասկով (փշով)։

Առանձին ռայոնների և մարզերի համար վարի խորությունը վորոշում են ռայոնական և մարզային գործկոմները, հաշվի առնելով աղտեղվածության բնույթն ու աստիճանը։

10) Բոլոր դեպքերում, բոլոր գործիքներով վարն ու ցանքը կատարել բոլորովին առանց անվար ու անցան տեղեր թողնելու, թույլ չտալով, վոր վարի ու ցանքի միջև մեկ որից ավելի ժամանակ անցնի։

11) Այն հողերում, վորտեղ նախորդ տարիս շարքահերկ կուլտուրաներ են ցանվել և վորտեղ քիչ քանակությամբ միամյա մոլախոտեր կան, կարելի յե հասկավոր կուլտուրաները ցանել արորավոր ցանիչներով և ցորենի գութաններով, այս գործիքներով վարելով 8—10 սանտիմետր խորությամբ։ Միամյա մոլախոտերով քիչ աղտեղված խոզանը կարելի յե վարել արորավոր ցանիչներով և ցորենի գութաններով այն դեպքում, յեթե յուրաքանչյուր առանձին դեպքում դրա համար ստացված է ՄՏԿ և ռայհող բաժնի թույլտվությունը։

12) Արգելել ցորենի դուքանների գործադրությունն այն հողերի վրա, որոնք աղտեղված են արմատիքներով կամ արմատածիլ մոլախոտերով։

13) Բոլոր հողերը,—որոնք պիտի վարել գարնանը և որոնք ձմեռվա ընթացքում չեն մաքրվել մոլախոտերի և շարքահերկ կուլտուրաների մնացորդներից, մինչև ցանքի սկիզբը, ոգտագործելով ցուրտ որերը, մաքրել ցողուններից, փոցխերով տափանելով և ձիափոցխերով, կառաչներով փշրել և այլ ձևեր գործադրել։

Առաջին հերթին մաքրել այն դաշտերը, որտեղ պիտի ցանվեն հասկավոր և վաղամշակ տեխնիկական կուլտուրաներ, գործադրելով աշխատանքային պարտակի կարգով գյուղացիական աղդարնակությանը զորահավաքելու իրավունքը։

11) Հասկավոր կուլտուրաների ցանքի ժամկետերը ամբողջ յերկրամասում սահմանել 9—16 որ, ցանքի սկզբից հաշված։ Պարտավորեցնել ռայոնական և մարզային կոմիտեներին, նայած հողի և կլիմայական պայմաններին և քարշող ուժի լարվածության, այդ սահմաններում ժամկետեր սահմանել մարզի և ռայոնի համար։

15) Հասկավորների սերմերը շարքացանիչներով ցանել $3^1/_2$—5 սմ. խորությամբ, նայած հողի դրության և խոնավության։

16) Մինչև դաշտ դուրս գալը մանրակրկիտ կերպով սարքել ցանիչները ըստ ցանքի ընդունված խորության։ Ապահովել դաշտում ցանքի խտության ամենորյա ստուգումը, կոլտնտեսություններում դրա համար նշանակել սահմանված նորմաներով ցանելու համար պատասխանատու մարդկանց։

17) Կտրականապես արգելել հասկավոր կուլտուրաների ցանքը չվարած խոզանում։

18) Ամենավաղ ցանքը ցեխոտ հողում կատարել միայն այն դեպքում, յեթե այդ հողն աշնանը լավ է վարած։ Դրա համար հատկացնել ավազոտ հողերը, կամ թեթևակի սևահողերը։

Ամենավաղ ցանքը ցեխոտ հողում սկսել գարնանը ձյան հալչելուց հետո, դաշտային աշխատանքներն սկսելուց 3—5 որ առաջ, սովորական ձևերով, այն հաշվով, որ սերմերը հողով ծածկվեն վոչ ավելի, քան ցանքից 5—6 որ հետո։ Ամենավաղ ցանքը շարունակել մինչև այն ժամանակ, յերբ հնարավոր կլինի վարելահողը տափանել (առանց նրա մակերևույթը սվաղելու), վորից հետո շաղացանը դադարեցնել և անցնել շարքացանիչներով ցանելուն։

Ամենավաղ ցանքի կատարմանը ներգրավել փորձված և ստուգված ցանողներին։

Ամենավաղ ցանքը 2—3 անգամ տափանել յերկաթե տափաններով, նայած հողի բնույթին։ Տափանումն սկսել՝ հենց վոր հնարավոր լինի հողն առանց սվաղելու տափանելը և ավարտել 1—2 որվա ընթացքում։

Ամենավաղ ցանքի դեպքում նրա նորմաները ավելացնել 10—12 տոկոսով, համեմատած շարքացանի նորմաների հետ։ Յեթե տնտեսության մեջ ամուր և փափուկ ցորեն կա, առաջին հերթին ցանել ամուր ցորենը։

Յեթե ամենավաղ ցանքի դաշտերում հողը կեղև բռնե, վերջինս վոչնչացնել մինչև ծլերի դուրս գալը, մեկ անգամ տափանելով թեթև տափանով։

Արգիլել տրակտորների գործադրությունը ամենավաղ ցանքի համար, ինչպես և նրանց ոգտագործումը սպասարկման աշխատանքների համար (սերմացուի, ջրի տեղափոխություն և այլն)։

19) Արևածաղիկը ցանել վաղամշակ հասկավոր կուլտուրաներից հետո, 4—6 սանտիմետր խորությամբ։

20) Յեգիպտացորենը ցանել 8—10 սանտիմետր խորությամբ, նայած հողի դրության։

21) Կտրականապես արգիլել շարքահերկ կուլտուրաների ֆիգուրային ցանքը։ Այս կուլտուրաների ցանքը կատարել միայն շարքացանիչներով, անպայման պահպանել շարքերի ուղղությունը, շարքամիջերի տարածությունները՝ ձիով և մեքենաներով մշակելու համար։

22) Հենց վոր հողը չորանա, աշնանացան արևածաղիկը տափանել մեկ յերկու անգամ։

23) Պարտավորեցնել ռայոնական ու մարզային գործկոմներին, ավյալ վորոշման հիման վրա մշակել ագրոտեխնիկական միջոցառումներ, վորոնք պարտադրաբար պիտի կատարվեն գարնանացանի ժամանակ, խորհնտեսությունների, ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից, հաշվի առնելով առանձին ռայոնների և մարզերի առանձնահատկություններն, ինչպես նաև դաշտերի այս կամ այն չափով աղտեղվածությունը։

24) Առաջարկել համապատասխան տրակտորակենտրոններին տալ տեղերին հիմնական կանոններ ուրիշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար,—ծխախոտ, բամբակ, շաքարի ճակնդեղ, գենագերչակ և այլն։

25) Հաշվի առնելով, վոր ցանքսաշրջանառություն մտցնելը բերքատվության բարձրացման վճռական միջոցառումներից մեկն է, պարտավորեցնել խորհնտեսություններին, ՄՏԿ-ներին և կոլտնտեսություններին, գարնանից սկսած, մտցնել կանոնավոր ցանքսաշրջանառություններ, ապահովելով դրա համար լավագույն հողերի, նախորդների և աշնանավարի ոգտագործումը,—առաջին հերթին հացահատիկային կուլտուրաների համար։

Կտրականապես արգիլել այնպիսի ցանքսաշրջանառությունների մտցնելը, վորոնց հետևանքով կարող են պակասել հացահատիկային կուլտուրաները։

Պարտավորեցնել ռայգործկոմներին ծրագրել այնպիսի միջոցառումներ, վորոնք ապահովում են կանոնավոր ցանքսաշրջանառություն մտցնելը։

26) Պարտավորեցնել ագրո-պերսոնալին, Ցերկրային ցանքային Կոմիտեի և ռայոնական ու մարզային գործկոմների սահմանած՝ հիմնական ագրոտեխնիկական կանոններին համապատասխան՝ մշակել և ագրոպլան-կարգագրերում սահմանել ագրոտեխնիկական միջոցառումների ցանկ, յուրաքանչյուր կուլտուրայի և հողամասի համար։

27) Գարնանացանի կամպանիայի ընթացքում ագրոտեխնիկական կանոնների կատարման պատասխանատվությունն անձնապես դրվում է ագրոտեխնիկական պերսոնալի, խորհնտեսությունների և ՄՏԿ-ների վերատեսուչների և կոլտնտեսությունների նախագահների վրա, ինչպես և աշխատանքն անմիջականորեն կատարող բրիգադների, կոլտնտեսականների ու տրակտորների վրա։ Այս վորոշումը կատարելու ընդհանուր հսկողությունը հանձնարարել ռայգործկոմին, գյուղխորհուրդներին և հողային որգաններին։

28) Աշխատանքների վորակի վրա մշտական հսկողությունն ապահովելու համար ռայոնական ու գյուղական՝ աշխատանքի վորակի տեսուչների կազմն ուժեղացնել լավագույն, ստուգված, կոլտնտեսային շինարարության հավատարիմ գյուղատնտեսներով և կոլտնտեսականներով։ Մտցնել այնպիսի սիստեմ, վոր կատարված աշխատանքներն ընդունեն—բրիգադիրը—յուրաքանչյուր կոլտնտեսականից և կոլտնտեսականների խմբակից, կոլտնտեսության գաշտավարը կամ վարչության նախագահը—բրիգադիրից։ Վորակի ստուգման տեսչությանը հանձնարարել ստուգել այդ ընդունելությունը դաշտերի ծելու և դրության վերաբերմամբ։

29) Պարտավորեցնել մարզային և ռայոնային գործադիր կոմիտեներին, գյուղխորհուրդներին՝ ՄՏԿ ու խորհտնտեսությունների քաղաքաժիններին մասսայական աշխատանք ծավալել խորհտնտեսությունների բանվորների, մեքենա-տրակտորային կայանների տրակտորիստների, բրիգադիրների և կոմտնտեսականների մեջ։ Ապահովել թե այս վորոշման և թե մարզային ու ռայոնային կոմիտեների վորոշումների լայն քննարկումը—վորոնք վերաբերում է 1933 թ. գարնանացանի կամպանիայի ընթացքում գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկական կանոններին ու ձևերին։

Ցերկրային ցանքային Կոմիտեն նախազգուշացնում է ռայդործկոմներին, խորհտնտեսություններին ՄՏԿ-ներին, կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին, վոր պետության կողմից Հյուսիսային Կովկասին տրված սերմացուի մեծ փոխառությունը առանձնահատուկ պատասխանատվություն է դնում յերկրամասի վրա ցանքն իր ժամանակին և լավորակով կատարելու համար։ Այս պատճառով ագրոտեխնիկական կանոնների խախտումը պետք է պատժվի հեղափոխական որենքների ամբողջ խստությամբ։

Ցանքի ժամանակների չարամիտ խախտումը։—

Սերմացուի գողությունն շտեմարաններից և ցանիչներից։—

Ցանքի նորմաների պակասեցումը։—

Դաշտերի անկանոն մշակումը, մոլախոտերը աճեցնելու և բերքատվությունը վիժեցնելու նպատակով։

Ցանված դաշտում անվար ու անցան տեղեր թողնելը։—

— Այս [illegible] վնասարարություն և կոլտնտես[illegible]ության հափշտակություն։

ՀՀ Ազգային գրադարան
NL0280395
16738